ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՆՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԸՆԹԱՑՔԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ԺԹ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Սուրենի Խուդոյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելս Պարգևի Մկրտումյան**
	հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սյուզի Ֆելիքսի Սարգսյան**
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 12.00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. նոյեմբերի 8-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կ. Ե. Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Զարգացման ճգնաժամերը որոշիչ դեր են խաղում անձի ճակատագրում, հաճախ որոշում անձի զարգացման ուղղությունը, կյանքի ուղին: Այսօրվա փոփոխվող աշխարհում, անընդհատ տնտեսական, սոցիալական, քաղաքական ճգնաժամերի պայմաններում, դրանց ընթացքը որակական փոփոխություններ է կրում և նպաստավոր պայմաններ ստեղծում բացասական զարգացումների համար:

Ճգնաժամերի հիմնախնդիրը հետազոտած այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Շ.Բյուլլերը, Ա. Բուզեմանը, Կ. Յունգը, Է.Կրեչմերը, Է.Էիրքսոնը, Հ. Ռեմշմիդտը, Գ. Ադլերը, Գ. Շահվերդյանը, Ս. Խուդոյանը գտնում են, որ դրանց բացասական հանգուցալուծման դեպքում հնարավոր են ոչ միայն նորմայի շրջանակներում անձնային անցանկալի փոփոխություններ, այլ անձի ախտաբանական զարգացումներ, բնավորության հիվանդագին փոփոխություններ՝փսիխապաթիաներ, նևրոզներ, փսիխոզներ, սոցիալական շեղումներ: Միևնույն ժամանակ, այսօր գրեթե հետազոտված չէ, թե հատկապես ինչ գործոններ են հանգեցնում ճգնաժամերի բացասական հանգուցալուծմանը և ինչպես կարելի է խուսափել ճգնաժամերի բացասական ընթացքից:

Բավական է ասել, որ մեզ հաջողվեց միայն մեկ հետազոտություն գտնել, որը նվիրված էր ճգնաժամի ընթացքի և դաստիարակության կապին: Պետք է ասել, որ զարգացման ճգնաժամերի հիմնախնդիրը տեսական առումով բավականաչափ հետազոտված կարելի է համարել (Լ.Ս.Վիգոտսկի, Շ.Բյուլլեր, Է.Էիրքսոնը, Դ.Բ. Էլկոնին, Ա. Ն. Լեոնտև, Լ.Ի. Բոժովիչ, Կ.Ն. Պոլիվանովա, Ս.Ս.Խուդոյան և ուրիշներ), սակայն էմպիրիկական առումով այն չափազանց թույլ է հետազոտված: Ահռելի խզում է նկատվում գիտական հետազոտությունների և պրակտիկայի միջև: Շատ քիչ են կամ ընդհանրապես չկան հետազոտություններ նվիրված զարգացման ճգնաժամերի և դրանց ընթացքի ախտորոշմանը, անձնային բնութագրերի և ճգնաժամերի ընթացքի կապին, ճգնաժամերը մեղմացնող դաստիարակչական մոտեցումների խնդրին և այլն:

Հետազոտության օբյեկտը երեք տարեկանի ճգնաժամի ընթացքը

Հետազոտության առարկան դաստիարակության ազդեցությունը երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի վրա:

Հետազոտության նպատակն է հետազոտության ենթարկել դաստիարակության տարբեր ոճերի ազդեցությունը երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի վրա:

Հետազոտության հիմքում ընկած գիտական վարկածի համաձայն՝

1. Այն դեպքում, երբ ծնողները նախադպրոցական տարիքի առանձնահատկությունների և երեք տարեկանի ճգնաժամի ախտանշանների վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ունեն և համապատասխան դաստիարակություն են իրականացնում՝ օգնում, խրախուսում, նպաստում են երեխայի, որպես լիարժեք մարդ ինքնահաստատվելու ձգտմանը և գործընթացին, օգնում են նրան կողմնորոշվելու, թե ինչպիսին պետք է լինի «մեծը» (լիարժեք մարդը), ընդունում են նրան որպես «հավասար», այսինքն լիարժեք մարդ, հաշվի են նստում նրա հետ, բարձրացնում են ինքնագնահատականը, ապա երեք տարեկանի ճգնաժամն ընթանում է մեղմ, առանց սուր ճգնաժամային ախտանշանների, ծնողների հետ կոնֆլիկտների: Այն դեպքում, երբ ծնողները պատնեշում են երեխայի ինքնահաստատման ձգտումները և գործընթացը («չի կարելի այսպես կամ այնպես անել», «հանգիստ մնա» և այլն), չեն խրախուսում

նրա «մեծ» երևալուն ուղղված վարքը, չեն կողմնորոշում նրան, թե ինչպես պետք է իրեն պահի մեծը, չեն նկատում նրան, որպես լիարժեք մարդ ու հաշվի նստում նրա հետ, իջեցնում են ինքնագնահատականը, ապա ճգնաժամը սուր ընթացք է ստանում:

2. Ճգնաժամը սրվում է ավտորիտար դաստիարակչական ոճի դեպքում: Մեղմ է ընթանում հեղինակության վրա հիմնվող դաստիարակության դեպքում:

3. Ճգնաժամի մեղմ ընթացքին նպաստում են անուղղակի մեթոդները, ճգնաժամի սուր ընթացքին նպաստում են ուղղակի դաստիարակության մեթոդների կիրառումը:

Գիտական վարկածը ստուգելու և աշխատանքի նպատակն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ հետազոտական **խնդիրները**.

1. Հետազոտության ենթարկել՝

ա) ճգնաժամերի վերաբերյալ պատկերացումների զարգացումը,

բ) երեք տարեկանի ճգնաժամի հիմնախնդրի արդի վիճակը, գ) դաստի-

րակության ու ճգնաժամերի ընթացքի կապին նվիրված աշխատանքները:

2. Տեսական և էմպիրիկ վերլուծության ենթարկել մանկական տարիքում ծնողական դաստիարակության առանձնահատկությունները, ոճերը:

3. Մշակել երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները գնահատելու չափանիշներ:

4. Մշակել մեթոդների համալիր՝ էմպիրիկորեն հետազոտելու դաստիարակության տարբեր ոճերի ազդեցությունը երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի վրա:

5. Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակել երեք տարեկանի ճգնաժամը դաստիարակությամբ մեղմելու հանձնարարականներ:

<u>Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը:</u>

Որպես հետազոտության մեթոդոլոգիական հիմք են հանդես եկել զարգացման և համակարգայնության սկզբունքները, անհատական մոտեցումը: Մենք հիմնվել ենք Լ.Ս. Վիգոտսկու կուլտուր-պատմական տեսության, է. էրիքսոնի զարգացման էպիգենետիկական սկզբունքի, Ա.Ն. Լեոնտևի, Դ.Բ. էլկոնինի գործունեության տեսության և Ս.Խուդոյանի օնտոգենեզի ֆունկցիոնալ պարբերացման և ճգնաժամերի տեսության վրա: Մեր հետազոտությունները կառուցել ենք Լ.Ս. Վիգոտսկու, Լ.Ի. Բոժովիչի, Հ. Վալոնի, Կ.Ն. Պոլիվանովայի և Ս. Խուդոյանի երեք տարեկանի ճգնաժամի կոնցեպցիաների վրա: **<u>Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն</u>** ուղղված են իրականացնելու հետազոտության նպատակը և խնդիրները:

Կիրառվել են հետևյալ մեթոդները և մեթոդիկաները

1. Զրույցի մեթոդ
2. Հարցման մեթոդ
3. Լ. Դյուսի պատմվածքների մոդիֆիկացված տարբերակը,
4. Դաստիարակության ոճերի հետազոտման՝ Սերգեյ Ստեպանովի ծնողական դաստիարակության ոճերի որոշման հարցարանը

<u>Հետազոտության գիտական նորույթը և տեսական նշանակությունը</u>- Հետազոտության մեջ վեր է հանվում դաստիարակության տարբեր ոճերի ազդեցությունը երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի վրա: Ցույց է տրվում, որ երբ ծնողներն օգնում, խրախուսում, նպաստում են երեխայի, որպես լիարժեք մարդ ինքնահաստատվելու ձգտմանը և գործընթացին, օգնում են նրան կոմնորոշվելու, թե ինչպիսին պիտի լինի «մեծը» (լիարժեք մարդը), ընդունում

են նրան, որպես §հավասար¦, այսինքն լիարժեք մարդ, հաշվի են նստում նրա հետ, բարձրացնում են ինքնագնահատականը, ապա երեք տարեկանի ճգնաժամն ընթանում է մեղմ, առանց սուր ճգնաժամային ախտանշանների, ծնողների հետ կոնֆլիկտների և հակառակը: Հիմնավորվում է, որ ճգնաժամը սրվում է ավտորիտար դաստիարակչական ոճի դեպքում: Մեղմ է հեղինակության վրա հիմնվող դաստիարակության ոճի դեպքում: էմպիրիկորեն ապացուցվում է, որ ճգնաժամի մեղմ ընթացքին նպաստում են դաստիարակության անուղղակի մեթոդների՝ասենք օրինակ ծառայելը, ներշնչանքը, խրախուսման և անտարբերության դրսևորումը և հակառակը՝ ճգնաժամն ավելի սուր է ընթանում ուղղակի դաստիարակության մեթոդների և պատժի, արգելքների ու սահմանափակումների, «իշխանության դրսևորման» հնարների կիրառման դեպքում:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը-</u> Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել երեխաների դաստիարակության հետ կապված հոգեբանական խորհրդատվության, մանկական հոգեթերապիայի ոլորտներում, նախադպրոցական հիմնարկներում երեխաների դաստիարակության կազմակերպման գործընթացում, տարիքային հոգեբանության դասընթացները կազմելիս:

<u>Հետազոտության հավաստիությունն և հուսալիությունը</u> ելնում է հոգեբանական հետազոտությունների համար առաջադրված գիտական պահանջներից: Արդյունքներն ապահովվել են հետազոտվողների մեծ քանակի ընդգրկմամբ, միևնույն վարկածային դրույթը տարբեր մեթոդիկաներով հետազոտելով (եթե տարբեր մեթոդիկաներ նույն արդյունքն են տալիս, ապա կարելի է պնդել, որ արդյունքները հավաստի են), հետազոտության արդյունքները մաթեմատիկական և վիճակագրական վերլուծության ենթարկելով:

<u>Պաշտպանությանը ներկայացվող դրույթները</u>

1. Դաստիարակության առանձնահատկություններն էական ազդեցություն են ունենում երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի վրա:
2. Երեք տարեկանի ճգնաժամի բացասական դրսևորումները նախադպրոցական հիմնարկում ակնհայտ ձևով չի դրսևորվում: Այնպիսի ախտանշաններ, ինչպիսիք են՝ նեգատիվիզմը, դեսպոտիզմը, արժեզրկումը, բունտը և այլն դաստիարակների և հասակակիցների հետ հարաբերություններում չեն դրսևորվում:
3. Երեք տարեկանի ճգնաժամի բացասական դրսևորումները (նյարդայնություն, կոնֆլիկտային վարք, նեգատիվիզմ, բունտ և այլն) աննկատ են անցնում երեք տարեկանի ճգնաժամի մեղմ և միջին սրության ընթացքի դեպքում:
4. Մեզանում առավել ընդունված է հեղինակության վրա հիմնվող և ավտորիտար դաստիարակության ոճերը:
5. Դաստիարակության լիբերալ և բարձիթողի ոճերը նախադպրոցական տարիքի դաստիարակչական համակարգում հայ ծնողներին բնորոշ չէ:
6. Երեք տարեկանի ճգնաժամի մեղմ ընթացքին նպաստում են ծնողների նախադպրոցական տարիքի առանձնահատկությունների և երեք տարեկանի ճգնաժամի ախտանշանների նշանակության վերաբերյալ ճիշտ պատկերացումները:
7. Ավտորիտար դաստիարակությունը սրում է երեք տարեկանի ճգնաժամը, իսկ հեղինակության վրա հիմնվող դաստիարակության ոճը՝ մեղմում:

8. Երեք տարեկանի ճգնաժամը մեղմ է ընթանում նաև դաստիարակության անուղղակի մեթոդների կիրառման դեպքում:

Հետազոտության փորձաքննությունը - Ատենախոսության փորձաքննությունն իրականացվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՀՄ Զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերում:

Աշխատանքի կառուցվածքը Ատենախոսությունը բաղկացած է համակարգչային 117 էջ կազմող շարադրանքից՝ ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, մեթոդական խորհուրդներից և հանձնարարականներից, գրականության ցանկից (107 անուն) և հավելվածներից: Աշխատանքում ներկայացված են 19 հիստոգրամ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, վարկածը և ենթավարկածները, առաջադրված խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, ձևակերպվել է աշխատանքի գիտական նորույթը, մատնանշվել է աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, ներկայացվել են պաշտպանությանը ներկայացվող դրույթները և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը** կրում է **«Երեք տարեկանում անձի զարգացման ճգնաժամի հետազոտությունները»** վերնագիրը**:** Այն բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում ներկայացվում են զարգացման ճգնաժամերի վերաբերյալ պատկերացումների զարգացումը հոգեբանության մեջ: Սկզբնական շրջանում ճգնաժամերի վերաբերյալ պատկերացումները ձևավորվել են կենցաղային գիտակցության մեջ, իսկ գիտության մեջ ավելի ուշ, երբ հոգեբանությունը և հոգեբուժությունը ձևավորվեցին որպես ինքնուրույն գիտություններ: Առաջին հետազոտողներից էին Ս.Հոլը, Օ. Կրոն, է. Կրեչմերը, Ա. Բուզեմանը, Շ. Բյուլլերը, Պ. Լ. Զագորովսկին, Պ.Պ. Բլոնսկին, Լ.Ս.Վիգոտսկին և ուրիշներ: Հետազոտությունների այս շրջանը կարելի է դիտել որպես ճգնաժամային տարիքների առանձնացման և նկարագրության շրջան: Այս ենթագլխում ներկայացվում են զարգացման ճգնաժամերի վերաբերյալ տեսությունների վերլուծությունները, ճգնաժամերի էմպիրիկական հետազոտությունները:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում է երեք տարեկանի ճգնաժամի վերաբերյալ տեսությունների մեկնաբանությունները: Տարիքային այս ճգնաժամի հայտնի տեսություններից է է. Էրիքսոնի տեսությունը, ով չնայած իր յուրահատուկ մեկնաբանությանը, էական նորամուծություններ է կատարում՝ կարևորում է նորմատիվ ճգնաժամերը և սոցիալական գործոնների դերը օնտոգենեզում: Այս ճգնաժամը է. Էրիքսոնը կապում է էդիպյան պրոբլեմների հետ: Երեք տարեկանի ճգնաժամին անդրադարձած մի շարք հեղինակներ այս տարիքի պրոբլեմները կապում են ես-համակարգում տեղի ունեցող խմորումների հետ: Այդ հեղինակներից է ֆրանսիացի գիտնական Հանրի Վալլոնը, Փ. Բլոսը, Լ.Ս.Վիգոտսկին: Վերջինս գտնում է, որ երեք տարեկանի ճգնաժամի ընթացքում երեխայի ես-ն է կիզակետում հայտնվում. տեղի է ունենում անձի, ես-ի ճգնաժամ, այսինքն հայտնվում են արաքներ, որոնց դրդապատճառներն անձի դրսևորման և ոչ թե տվյալ պահի, իրավիճակի հետ

են կապված: Լ.Ի. Բոժովիչը գտնում է, որ երեք տարեկանի ճգնաժամի ընթացքում ես-համակարգն է վերակառուցումներ ապրում: Ըստ Դ.Բ.Էլկոնինի այս ճգնաժամի հիմնական նորագոյացությունը «Ես ինքս» համալիրն է, որը քանդում է նախկին «մենք»-ի գիտակցությունը: Ռուս գիտնական Վ. Մուխինան նույնպես կարևորում է ես-համակարգի վերակառուցումը երեք տարեկանի ճգնաժամի շրջանում: Երեք տարեկանի ճգնաժամի էմպիրիկական հետազոտություններ է կատարել ռուս հոգեբան Տ. Գուսկովան: Մեզանում երեք տարեկանի ճգնաժամի տեսական և էմպիրիկական հետազոտություններ է իրականացրել Ս. Խուդոյանը:

Երրորդ ենթագլխում ներկայացվում են ճգնաժամերի ընթացքի վրա դաստիարակության ազդեցության հետազոտությունները: Ճգնաժամերի հիմնախնդրի հետազոտողներից շատերն այն կարծիքին են, որ դրանք պայմանավորված են զարգացման ներքին օրինաչափություններով և ոչ թե արտաքին ներգործություններով: Ըստ Լ.Ս. Վիգոտսկու, Դ.Բ. Էլկոնինի, Կ. Ն. Պոլիվանովայի ճգնաժամերը պարտադիր երևույթներն են, Ա.Ն.Լեոնտևը գտնում է, որ ճգնաժամերն ամենևին էլ պարտադիր երևույթներ չեն: Ավելի ուշ ճգնաժամերի հիմնախնդիրը հետազոտող ռուս հոգեբանները նշված երկու մոտեցումներն էլ դրսևորում են:

Երկրորդ գլուխը՝ «Երեք տարեկանում անձի զարգացման ճգնաժամի ընթացքի բնութագրերը և դրանք պայմանավորող գործոնները» նույնպես բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը նվիրված է Լ. Ս. Վիգոտսկու, Կ. Ն. Պոլիվանովայի, Ս. Ս. Խուդոյանի կողմից առանձնացված զարգացման ճգնաժամերի ընթացքի փուլերի մեկնաբանությանը:

Երկրորդ ենթագլուխը՝ ճգնաժամի ընթացքի սրմանը նպաստող գործոնների՝ մասնավորապես դաստիարակության առանձնահատկությունների վերաբերյալ ժամանակակից պատկերացումներին է անդրադառնում: Տրվում է ժամանակակից մանկավարժության մեջ, հոգեբանական բառարանում դաստիարակության սահմանումը: Անդրադարձ է կատարվում դաստիարակության բովանդակության, ոճերի, դաստիարակության մեթոդների նկարագրությանը:

Երրորդ ենթագլուխը նվիրված է մասնավորապես դաստիարակության տարիքային առանձնահատկություններին, պարզունակ ժողովուրդների դաստիարակչական համակարգերում տարիքային գործոնի հաշվառման խնդրին: Այս հանգամանքները անտեսելու դեպքում արդյունքները մեղմ ասած բավարար չեն լինի: Նույն ձևով էլ տարբեր տարիքային խմբերի երեխաների դաստիարակությունը պետք է տարբեր լինի՝ պայմանավորված տվյալ տարիքային խմբի հոգեբանական առանձնահատկություններով, չէ որ հնարավոր չէ կայուն տարիքների դաստիարակությունը կիրառել ճգնաժամային տարիքներում:

Չորրորդ ենթագլուխը նվիրված է երեք տարեկանում տեսակային ես-ի արթնացմանը, ես-կոնցեպցիայի ձևավորմանը, ներկայացվում է թե ինչ առանձնահատկություններ պետք է ունենա դաստիարակությունն այս տարիքում, զուգահեռներ է անցկացվում դեռահասության տարիքի ճգնաժամին և այդ տարիքում կիրառվող դաստիարակության ոճերի միջև, առաջ է քաշվում էմպիրիկական հետազոտության նպատակը, վարկածային դրույթները:

Ատենախոսության **երրորդ՝ «Երեք տարեկանում անձի զարգացման ճգնաժամի ընթացքի վրա դաստիարակության ազդեցության էմպիրիկական հետազոտություն»** գլխում չորս ենթաբաժնով ներկայացվում է

փորձարարական որջ աշխատանքը: Այն ուղղված է բացահայտելու դաստիարակության տարբեր ոճերի ազդեցությունը երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի վրա:

Մեր հետազոտություններն իրականացվել են չորս փուլերով՝ 2011-2013 թվականներին:

Առաջին փուլում մշակվել է էմպիրիկ հետազոտության ծրագիրը, ընտրվել են մեթոդներն ու մեթոդիկաները (2011 թ..):

Երկրորդ փուլում իրականացվել է երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի բնութագրերի հետազոտություն (2011թ.)

Երրորդ փուլում հետազոտության են ենթարկվել դաստիարակչական տարբեր մոտեցումների ազդեցությունը երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի վրա (2012-2013թ.թ.):

Չորրորդ փուլում վերլուծության են ենթարկվել և ամփոփվել են էմպիրիկ հետազոտության արդյունքները, մշակվել են եզրակացությունները և մեթոդական հանձնարարականները (2013թ.):

<u>Հետազոտության բազան և ընտրանք</u> են կազմել նախադպրոցական տարիքի երեխաները, նրանց ծնողները: Մեր հետազոտություններին մասնակցել է 2.5-4 տարեկան 138 երեխա, 138 ծնող: Հետազոտություններն իրականացվել են Երևանի թիվ 99 և թիվ 100 մանկապարտեզներում:

<u>էմպիրիկ հետազոտություններն իրականացվել են երկու ուղղություններով.</u>

1. Երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների ախտորոշում:
2. Դաստիարակչական տարբեր մոտեցումների և դրանց երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի վրա ունեցած ազդեցության հետազոտություն:

Փորձարարական հետազոտության 1-ին փուլում ուսումնասիրվել է երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի սրության բնութագրերը և տարբերակվել երեխաներին ըստ ճգնաժամի մեղմ, միջին և սուր ընթացքի

Որպես մեթոդ օգտագործվել է. զրույց ծնողների հետ և հարցում ծնողների հետ:

Այս խնդրի հետազոտությունը երեք տարեկանում բավական բարդ է, քանի որ երեխան հստակորեն չի գիտակցում ճգնաժամային ախտանշանների հիմքում ընկած իր ապրումները, դրանց պատճառները, չի կարող բացատրել իր վարքը և այս ամենի մասին պատմել, հարցարաններ լրացնել կամ պրոյեկտիվ թեստերի միջոցով իր ապրումների սրության վերաբերյալ մեկնաբանություններ տալ:

Ճգնաժամի սրությունը հնարավոր չէ հետազոտել նաև դիտման մեթոդով, քանի որ ախտանշանները դրսևորվում են միայն որոշակի իրավիճակներում, հիմնականում ընտանիքում՝ծնողների հետ շփման ընթացքում (ասենք մանկապարտեզում, հասակակիցների հետ շփումների ժամանակ ճգնաժամային ախտանշանները հազվադեպ են, օրինակ, նեգատիվիզմը դրսևորվում է ծնողի, բայց ոչ դաստիարակի կամ հասակակցի հետ:) Ասվածից ելնելով՝ երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի սրության հետազոտման առավել ինֆորմատիվ մեթոդներ ենք համարում զրույցը և հարցումը ծնողների հետ (հարցաշարը կազմվել է Ս.Խուդոյանի կողմից), ում հետ հարաբերություններում էլ ընթանում է երեք տարեկանի ճգնաժամը և ովքեր երեխայի վարքի առանձնահատկությունների վերաբերյալ ամենա

իմֆորմացվածն են (երեք տարեկանում, ի տարբերություն մյուս ճգնաժամային տարիքների, ճգնաժամի ախտանշանները միայն վարքի մեջ են դրսևորվում):

Հետազոտությունն անց է կացվել 2011թ. Երևանի թիվ 99, 100 մանկապարտեզների միջին և ավագ խմբերի սաների (2,5 – 4 տարեկան) ծնողների հետ (2,5-4 տարեկան երեխաների 53 ծնող, 3,6 -4 տարեկան երեխաների 14 ծնող): Հետազոտությանը մասնակցել են 67 ծնող (58 մայր և 9 հայր):

Զրույցը սկսում էինք՝ բացատրելով նպատակը՝ այն է պարզել երեք տարեկանի նորմատիվ ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները հայ երեխաների մեջ, բացատրում էինք, որ այս տարիքային ճգնաժամը, ինչպես և դեռահասության ճգնաժամը (այս ճգնաժամի մասին մեծ մասը տեղյակ էր), պայմանավորված է զարգացման օրինաչափություններով: Ապա խնդրում էինք նշել, թե երբ են նկատել իրենց երեխայի մեջ բացասական փոփոխություններ, ասենք նյարդայնության, ծնողներին հակադրվելու, կոպտելու և երեք տարեկանի ճգնաժամին բնորոշ այլ ախտանշաններ: Զրույցի հիման վրա առանձնացրեցինք երեք տարեկանի ճգնաժամի սուր, միջին սրության և մեղմ ընթացքի հիմնական բնութագրերը և ըստ ճգնաժամի ընթացքի սրության տարբերակեցինք երեխաներին: Հարցման մեթոդով ետազոտության նպատակն էր ավելի մեծ քանակությամբ հետազոտվողներից ստացված արդյունքների հիման վրա դասակարգել երեխաներին ըստ երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի սրության:

Հետազոտությունն իրականացվել է 2011 թթ. մանկապարտեզների միջին և ավագ խմբերի սաների (2,5-4 տարեկան) ծնողների հետ (2,5-4 տարեկան երեխաների 116 ծնող, 3,6-4 տարեկան երեխաների 22 ծնող): Հետազոտությանը մասնակցել են 138 ծնող (120 մայր և 18 հայր):

Հետազոտությանը մասնակցում էին նաև զրույցին մասնակցած երեխաների 67 ծնողները(նպատակն էր՝ ճշտել զրույցի արդյունքների հավաստիությունը): Հետազոտությունների արդյունքները հետևյալն էին՝

Հիստոգրամ 1



Առավել հաճախ երեխայի անձի մեջ կտրուկ փոփոխությունները, ճգնաժամային ախտանշանների գագաթնակետը վերաբերում էր 2,8-4

տարեկանին (41 երեխա՝ 61%), 26 երեխաների մեջ ճգնաժամային ախտանշանները սկսել են ի հայտ գալ 3,6-4 տարեկանում: Հետաքրքրականն այն է, որ մանկապարտեզում ախտանշանները գրեթե չեն դրսևորվում, նույնիսկ սուր ճգնաժամի մեջ գտնվող երեխաների դաստիարակները նշում էին, որ երեխաների մեջ առանձնահատուկ ոչինչ չեն նկատել: Սուր ճգնաժամի մեջ գտնվող երեխաներից միայն մեկի կապակցությամբ դաստիարակը դժգոհություն հայտնեց, որ ագրեսիվ վարք է դրսևորում , հասակակիցներին ծեծում է:

Ճգնաժամային ախտանշանները չեն դրսևորվում նաև հասակակիցների հետ հարաբերություններում:

Երկրորդ փուլում հետազոտել ենք ծնողական դաստիարակության առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում: Հետազոտության այս փուլում, մենք նպատակ էինք հետապնդում պարզել, թե կապվա±ծ են արդյոք երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները դաստիարակչական որոշակի մոտեցումների, մասնավորապես, դաստիարակության ոճի, երեխայի նկատմամբ ծնողի վերաբերմունքի, դաստիարակության ուղղակի կամ անուղղակի մեթոդների նախապատվության, ինչպես նաև դաստիարակության բովանդակային կողմի հետ: Ըստ որում, բովանդակային կողմ ասելով նկատի ունենք այն, թե ծնողի կողմից ինչպես են ըմբռնվում նախադպրոցական տարիքում երեխայի զարգացման առանձնահատկությունները, վարքային դրսևորումների, տարիքայիյ խնդիր-ների և ճգնաժամի ախտանշանների էությունը, նշանակությունը, բովանդակու-թյունը և ինչպիսի դաստիարակչական հակազդում է տրվում դրանց:

Ծնողը, կարող է իհարկե հատուկ մասնագիտական գիտելիքներ չունենալ երեխայի զարգացման տարիքային օրինաչափությունների վերաբերյալ, սակայն ինտուիտիվ հասկանալ, թե զարգացման ինչ խնդիրների առջև է կանգնած երեխան և նպաստել դրանց լուծմանը:

Կոնկրետ երեք տարեկանի շրջանում ծնողները, տեսնելով, որ երեխան անընդհատ շեշտում է իր ես-ը, ձգտում է մեծ երևալ, վիրավորվում է, երբ բռնանում են նրա ես-ի, կամքի վրա, ինքնահաստատվելու համար գլուխգովանությամբ է զբաղվում, նմամակում է ծնողներին (հիմնականում նույն սեռի ծնողներին), դրսևորում է ճգնաժամային ախտանշանները, որոնք բոլորը պտտվում են երեխայի ես-ի շուրջը (Լ.Ս. Վիգոտսկի)՝ ինտուիտիվ զգում են, որ երեխայի ես-ի մեջ ինչ-որ խմորումներ են տեղի ունենում և աշխատում են բարձրացնել նրա ես-ը, անընդհատ գովել նրան:

Որպես մեթոդ օգտագործվել է հարցում ծնողների հետ, որի արդյունքում պարզ դարձավ, որ ծնողների հիմնական մասը՝ *106* ծնող (77%), թերևս զուտ ինտուիտիվ (դժվար թե նրանք նեղ մասնագիտական պատկերացումներ ունենային նախադպրոցական տարիքի, 3 տարեկանի ճգնաժամի վերաբերյալ) ճիշտ կամ մասնակի ճիշտ պատկերացումներ ունեն նախադպրոցական տարիքի և դաստիարակչական դիրքորոշումների վերաբերյալ:

Հիստոգրամ 2



Ծնողական դաստիարակութան բովանդակային կողմը հետազոտելու նպատակով մենք կիրառել ենք նաև Լ. Դյուսի նախադպրոցական երեխաների ներաշխարհի հետազոտմանն ուղղված պատմվածքների մեթոդիկան՝ մոդիֆիկացված տարբերակով:

Լ.Դյուսի մեթոդիկայով երեխաներին ներկայացվում են պատմություններ, որոնց հերոսը՝ հիմնականում երեխա, պրոբլեմային իրավիճակում է հայտվում: Այդ իրավիճակում հերոսը ինչ-որ բան պիտի մտածի կամ անի: Հետազոտվողին խնդրում են բացատրել, թե հերոսն ինչ է մտածում կամ ինչ կանի:

Հետազոտությունն իրականացվել է 2012թվականին:

Հետազոտությանը մասնակցել են 2,5-4 տարեկան 138 երեխա՝ 78 աղջիկ, 60 տղա:

Հետազոտության արդյունքները, այսինքն երեխաների պատասխանները դասակարգվել են ըստ «ճիշտ» (7-10 պատմվածքներին ճիշտ պատասխաններ էին տրվել), « մասնակի ճիշտ» (4-6 պատմվածքներին ճիշտ պատասխաններ էին տրվել), «սխալ» (մինչև 3 պատմվածքներին ճիշտ պատասխաններ էին տրվել) դաստիարակչական մոտեցումների: Ճիշտ էին համարվում բոլոր այն պատասխանները, որոնք վկայում էին ոչ ավտորիտար, երեխայի անձը հարգող, բարձրացնող և որպես հավասար ընդունող, խրախուսանքի և ոչ թե պատժի վրա հիմնվող ճգնաժամային ախտանշանները ճիշտ գնահատող, երեխայի վարքի բացասական դրսևորումներին ոչ թե կոպտություն, երեխայի անձի նվաստացում, այլ հնարամիտ հնարներ կիրառող (օրինակ՝ դու խելացի տղա ես, իսկ խելացի տղաները նման դեպքերում այսպես են վարվում) և նման դաստիարակչական մոտեցումների մասին (սխալ էին համարվում հակառակ դաստիարակչական հնարների կիրառման մասին վկայող պատասխանները):

Ճիշտ դաստիարակչական մոտեցումների մասին էին վկայում *37* երեխայի պատասխան (27%), *67* (48%) երեխայի պատասխան մասնակիորեն ճիշտ դաստիարակչական մոտեցումների մասին էին վկայում, 34 (25 %)

երեխայի պատասխան սխալ դաստիարակչական մոտեցումների մասին էին վկայում

Հիստոգրամ 3



Ծնողական դաստիարակության ոճերը հետազոտել ենք ըստ Սերգեյ Ստեպանովի ծնողական դաստիարակության ոճերիր որոշման հարցարանի:

Հիստոգրամ 4



Դաստիարակության ուղղակի և անուղղակի մեթոդների կիրառումը ծնողների կողմից հետազոտվել է Ս. Խուդոյանի կողմից մշակված հարցարանով: **Հետազոտության նպատակն էր** պարզել, թե ծնողները դաստիարակության որ մոտեցումներին են նախապատվություն տալիս՝ ուղղակի, թե անուղղակի:

Հետազոտությունն իրականացվել է 2012 թվականին Երևանի թիվ 99, 100 մանկապարտեզների միջին և ավագ խմբի սաների (2,5-4 տարեկան) 138 ծնողների (120 մայր և 18 հայր) հետ, ովքեր մասնակցել էին նախորդ հետազոտություններին (նկատի ունենք երեք տարեկանի ճգնաժամի սրության և դաստիարակության բովանդակային կողմի հետազոտությունները):

Հիստոգրամ 5



Ըստ հետազոտության արդյունքների երեք տարեկանի ճգնաժամը մեզնում հարաբերականորեն մեղմ է ընթանում, հազվադեպ է սուր ընթացք ստանում, գերակշռում է մեղմ ընթացքը, որն ըստ էության կարող է դիտարկվել որպես անճգնաժամային ընթացք: Առավել հաճախ երեխայի անձի մեջ կտրուկ փոփոխությունները, ճգնաժամային ախտանշանների գագաթնակետը վերաբերում էր 2,8-4 տարեկանին (41 երեխա՝ 61%), 26 երեխաների մեջ ճգնաժամային ախտանշանները սկսել են ի հայտ գալ 3,6-4 տարեկանում: Հետաքրքրականն այն է, որ մանկապարտեզում ախտանշանները գրեթե չեն դրսևորվում: Ճգնաժամային ախտանշանները չեն դրսևորվում նաև հասակակիցների հետ հարաբերություններում:

Հետազոտությունների վերջին փուլում համեմատական վերլուծության ենք ենթարկել նախորդ հետազոտությունների արդյունքները, այսինքն համեմատել ենք ճգնաժամի ընթացքի տարբեր դրսևորումներ ունեցող (սուր, միջին սրության, մեղմ) երեխաների դաստիարակության առանձնահատկությունները՝ պարզելու, թե արդյոք կապ կա դաստիարակության նշված բնութագրերի և ճգնաժամի ընթացքի սրության միջև:

Մենք կատարել ենք վիճակագրական մեթոդներով վերլուծություն՝ /Պիրսոնի կորելյացիայի մեթոդով/ պարզելու, թե ինչպիսի կապ գոյություն ունի ճգնաժամի սրության և ճիշտ դաստիարակչական մոտեցումների միջև: Ընդհանուր տվյալների համեմատական վերլուծության արդյունքում ստացել

ենք – 0.6, որը նշանակում է, որ գոյություն ունի հակադարձ համեմատական կապ ճիշտ դաստիարակչական մոտեցումների ու ճգնաժամի սուր ընթացքի միջև, կամ որ նույնն `ուղիղ համեմատական կապ սխալ դաստիարակչական մոտեցումների ու ճգնաժամի սուր ընթացքի միջև: Այսինքն, որքան ավելի ճիշտ են դաստիարակչական մոտեցումները, այնքան ճգնաժամն այս տարիքում ավելի մեղմ է դառնում: Ընդ որում, տվյալներն ու օրինաչափ կապերն ավելի ցայտուն են դառնում ճգնաժամի մեղմ և սուր ընթացքի և այս դեպքերում դաստիարակչական մոտեցումների վիճակագրական վերլուծության դեպքում: Այսպես, ճգնաժամի մեղմության և ճիշտ դաստիարակչական մոտեցումների միջև կապը մոտավորապես 0.9 է, որը նշանակում է, որ մոտ 90 % համապատասխանություն կա: Ճգնաժամի սրության և սխալ դաստիարակչական մոտեցումների միջև կապը ավելի ցայտուն է՝ 0.96:

Հիստոգրամ 6



Արդյունքները ցույց տվեցին, որ գոյություն ունի ուղիղ համեմատական կապ սխալ դաստիարակչական մոտեցումների ու ճգնաժամի սուր ընթացքի միջև: Այսինքն, որքան ավելի ճիշտ են դաստիարակչական մոտեցումները, այնքան ճգնաժամն այս տարիքում ավելի մեղմ է դառնում:

Սերգեյ Ստեպանովի հարցարանով իրականացված դաստիարակության ոճերի ե երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի համեմատական հետազոտությունը ցույց տվեց հետևյալ ընդհանրացված պատկերը

Հիստոգրամ 7



Երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի վրա ուղղակի և անուղղակի մեթոդների ազդեցության ընդհանրացված պատկերը երևում է հետևյալ հիստոգրամում

Հիստոգրամ 8



Ամփոփելով մեր հետազոտությունների արդյունքները կարելի է պնդել, որ դաստիարակությունն իսկապես կարևոր դեր է խաղում ընդհանրապես զարգացման ճգնաժամերի և մասնավորապես երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի սրման գործում: Ըստ որում, տարբեր տարիքային ճգնաժամերի ընթացքի վրա կարող են ազդել դաստիարակության տարբեր առանձնահատկություններ, այսպես, եթե դեռահասության ճգնաժամի ընթացքի սրման վրա ավտորիտար դաստիարակությունը չի անդրադառնում, ապա նույն դաստիարակությունը նախադպրոցական տարիքում կտրուկ սրում է ճգնաժամը: Անշուշտ այս ոլորտում հետազոտությունները պետք է շարունակվեն, ճշգրտվեն ստացված արդյունքները, մշակվեն ծնողների, դաստիարակների և երեխաների համար այնպիսի թրեյնինգներ, որոնք կօգնեն ավելի բարեհաջող հաղթահարել զարգացման ճգնաժամները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Չնայած այն հանգամանքին, որ բազմաթիվ ականավոր գիտնականներ նշել են, որ դաստիարակությունը մեծ ազդեցություն է ունենում զարգացման ճգնաժամերի ընթացքի վրա, այնուամենայնիվ այս հիմնախնդիրը գրեթե չի հետազոտվել, իսկ երեք տարեկանի ճգնաժամի ընթացքի պայմանավորվածությունը դաստիարակությամբ ընդհանրապես չի հետազոտվել:
2. Երեք տարեկանի ճգնաժամի ախտանշանները մանկապարտեզում՝ դաստիարակների և հասակակիցների հետ շփումներում գրեթե չեն դրսևորվում:

3. Երեք տարեկանի ճգնաժամի մեղմ և միջին սրության ընթացքի դեպքում զարգացման ճգնաժամը հարուցող տարիքային նորագոյացություններն ի հայտ են գալիս առանց նշանակալի բացասական դրսևորումների (այսինքն նյարդայնություն, կոնֆլիկտային վարք և այլն):
4. Որքան ավելի ճիշտ է ծնողը պատկերացնում նախադպրոցական տարիքի առանձնահատկությունները և երեք տարեկանի ճգնաժամի ախտանշանների իմաստը, այնքան ավելի ճիշտ դաստիարակություն է իրականացնում և այնքան ավելի մեղմ է ընթանում երեք տարեկանի ճգնաժամը և հակառակը:
5. Հայ ծնողներին բնորոշ են հեղինակության վրա հիմնվող և ավտորիտար դաստիարակության ոճերը:
6. Փորձարարական հետազոտություններով հիմնավորվեց մի շարք գիտնականների այն տեսակետը, որ ավտորիտար դաստիարակությունը սրում է ճգնաժամը: Այս պնդումը ճիշտ է երեք տարեկանի ճգնաժամի կապակցությամբ, սակայն ինչպես ցույց են տվել այլ հեղինակների հետազոտությունները, մասնակիորեն է ճիշտ դեռահասության ճգնաժամի դեպքում:
7. Երեք տարեկանի ճգնաժամի միջին սրության և մեղմ ընթացք դրսևորող երեխաների ծնողները նախընտրում են հիմնականում հեղինակության վրա հիմնվող դաստիարակության ոճը:
8. Երեք տարեկանի ճգնաժամի մեղմ ընթացք դրսևորող երեխաների ծնողները նախընտրում են դաստիարակության անուղղակի և անորոշ (հավասարապես կիրառվում են և՛ ուղղակի և՛ անուղղակի մեթոդները) մեթոդները, այն դեպքում, երբ ճգնաժամի սուր ընթացք դրևորող երեխաների ծնողներն ուղղակի մեթոդներն են նախընտրում: Դաստիարակության անորոշ ոճն են նախընտրում նաև երեք տարեկանի ճգնաժամի միջին ընթացք դրսևորող երեխաների ծնողները:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Իրականացված հետազոտությունները թույլ են տալիս առաջարկել հետևյալ մեթոդական խորհուրդներն ու հանձնարարականները ծնողներին և նախադպրոցական հիմնարկների աշխատակիցներին:

1. Զարգացման ճգնաժամերի ընթացքը մեծապես պայմանավորված է դաստիարակությամբ, իսկ ճգնաժամի սուր ընթացքը վկայում է դաստիարակչական սխալ մոտեցումների կիրառման մասին: Նախադպրոցական հիմնարկների աշխատակիցները և ծնողները՝նկատելով երեխաների վարքի մեջ կտրուկ, բացասական փոփոխություններ պետք է գիտակցեն, որ ճգնաժամը սուր ընթացք է ստանում (այդ նպատակով կարող է օգտագործվել նաև Ս. Խուդոյանի մշակած հարցարանը), պարզեն, թե հատկապես ինչն է նպաստում դրան և հատուկ միջոցառումներ ձեռնարկեն՝ փոխելու իրենց դաստիարակչական մոտեցումները:
2. Երեք տարեկանի ճգնաժամի ընթացքը մեղմելու և երեխայի անձի մեջ դրական տեղաշարժեր իրականացնելու համար չափազանց կարևոր է, որ ծնողը հստակ պատկերացնի նախադպրոցական տարիքի առանձնահատկությունները և երեք տարեկանի ճգնաժամի ախտանշանների իմաստը և իր դաստիարակչական համակարգը համապատասխանեցնի այդ պատկերացումներին՝ բարձրացնի երեխ այի ինքնագնահատականը, չվիրավորի երեխայի անձը, երեխայի մեծական վարքի դրսևորումները խրախուսի և այլն: Ըստ այդմ չափազանց կարևոր ենք համարում նախադպրոցական հիմնարկներում տարիքային հոգեբանական գիտելիքների և դրանց վրա հիմնվող դաստիարակչական մեթոդների ուսուցմանն ուղղված դասընթացների կազմակերպումը ծնողների հետ:
3. Երեք տարեկանի ճգնաժամի ընթացքը մեղմելու համար ծնողները հնարավորինս պետք է խուսափեն ավտորիտար դաստիարակությունից և առավելապես իրականացնեն հեղինակության վրա հիմնվող դաստիարակության ոճ:
4. Հեղինակության վրա հիմնվող դաստիարակության ոճը մեղմում է երեք տարեկանի ճգնաժամը, հետևաբար անհրաժեշտ է ծնողների և դաստիարակների համար կազմակերպել դաստիարակության այս ոճի ուսուցմանն ուղղված թրեյնինգներ:
5. Դաստիարակության անուղղակի մեթոդներն ավելի արդյունավետ են նախադպրոցական տարիքում և մեղմում են երեք տարեկանի ճգնաժամը, հետևաբար անհրաժեշտ է ծնողների և դաստիարակների համար իրականացնել այս մեթոդների ուսուցման թրեյնինգներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվում են հեղինակի հրատարակած հետևյալ աշխատանքներում

1. Ալավերդյան Ա.Հ, Երեք տարեկանի ճգնաժամի հիմնախնդիրը հոգեբանության մեջ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական աշխատանքների ժողովածու, 1-ին հատոր, Երևան «Մանկավարժ» Հրատարակչություն, 2002թ.,էջ 266-269
2. Ալավերդյան Ա.Հ, Դաստիարակության ոճերը և դրանց ազդեցությունը զարգացման ճգնաժամերի ընթացքի վրա, «Մանկավարժական միտք», 2013թ. 1-2, Զանգակ հր., էջ 263-266

3. Ալավերդյան Ա.Հ, Ծնողական դաստիարակության առանձնահատկությունները և երեք տարեկանի ճգնաժամը, Սուրեն Խուդոյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2013թ., էջ 44-47
4. Ալավերդյան Ա.Հ, Անձի դաստիարակության և ձևավորման գործընթացում զարգացման ճգնաժամերի դերն ու դրանց մասին պատկերացումների զարգացումը, «Մանկավարժական միտք», 2014թ. 3-4, Զանգակ հր., էջ 289-292

АЛАВЕРДЯН АННА АМБАРЦУМОВНА

КРИЗИС РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ ТРЕХ ЛЕТ И ФАКТОРЫ ОПРЕДЕЛЯЮЩИЕ ЕГО ТЕЧЕНИЕ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 «Общая психология, теория и история психологии, психология личности».

Защита диссертации состоится 09 декабря 2014 года в 12:00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Кризисы развития играют решающую роль в судьбе человека, часто они определяют направление развития личности и его жизненый путь. В настоящее время они претерпевают качественные изменения, создавая этим благоприятные условия для негативных развитий. Ученые исследовавшие проблему кризисов, такие как К. Бюлер, А. Буземан, К. Юнг, Э. Кречмер, Э. Эриксон, Х. Ремшмидт, А. Адлер, Г. Шахвердян, С. Худоян, считают, что в случае их отрицательного развития возможны не только нежелательные личностные изменения в рамках нормы, но и развитие патологий личности, патологические изменения характера, например, психопатии, неврозы, психозы, социальные отклонения. В то же время почти не изучено какие именно факторы приводят к отрицательной развязке кризиса и как можно избежать их негативного развития. Достаточно сказать, что нам удалось найти только одно исследование посвященное тому как течение кризиса связано с воспитанием. Следует отметить, что теоретический аспект проблемы кризисов довольно подробно описан (Л.С. Выготский, К. Бюлер, Э. Эриксон, Д.Б. Эльконин, А.Н. Леонтьев, Л.И. Божович, К.Н. Поливанова, С.С. Худоян и другие), однако в эмпирическом плане проблема слабо изучена. Существует огромный разрыв между научными исследованиями и практикой. Очень мало или даже нет исследований посвященных диагностике развития кризисов и их течения, связи личностных характеристик и течения кризисов, проблеме воспитательных подходов смягчающих кризисы и т.д.

Цель исследования. Целью исследования является изучение влияния различных стилей воспитания на течение кризиса трех лет.

Гипотеза исследования. 1. Если родители имеют правильное представление об особенностях дошкольного возраста и симптомах кризиса трех лет, а также проявляют это в воспитании, т.е. поддерживают, поощряют процесс и стремление ребенка самоутвердится как полноценному человеку, помогают ему решить каким должен быть “взрослый” (полноценный человек), принимают его как “равного”, т.е. полноценного человека, считаются с ним, поднимают его самооценку, то кризис трех лет протекает мягко, без симптомов острого кризиса, конфликтов с родителями. Если родители

препятствуют стремлениям и процессу самоутверждения ребенка (“нельзя делать то или это”, “успокойся” и т.д.), не поощряют его поведение направленное на то чтобы казаться “взрослым”, не разъясняют ему как должен себя вести взрослый, не воспринимают его как полноценного человека и не считаются с ним, то течение кризиса обостряется.
2. Кризис усугубляется при авторитарном стиле воспитания и протекает мягко при воспитании основанном на авторитет.
3. Мягкому течению кризиса способствуют косвенные методы, а острому течению кризиса способствует использование прямых методов воспитания.

Объектом исследования является течение кризиса трех лет.

Предметом исследования является влияние воспитания на течение кризиса трех лет.

Научная новизна исследования. В исследовании рассмотрено влияние различных стилей воспитания на течение кризиса трех лет. Если родители поддерживают, поощряют процесс и стремление ребенка самоутвердится как полноценному человеку, помогают ему решить каким должен быть “взрослый” (полноценный человек), принимают его как “равного”, т.е. полноценного человека, считаются с ним, поднимают его самооценку, то кризис трех лет протекает мягко, без симптомов острого кризиса, конфликтов с родителями и наоборот. Обосновывается, что кризис обостряется при авторитарный стиле воспитания и протекает мягко при воспитании основанном на авторитет. Эмпирически доказывается, что мягкому течению кризиса способствуют косвенные методы воспитания, такие как подавать пример, вдохновлять, поощрять и проявлять безразличие, и наоборот – кризис обостряется при использовании прямых методов воспитания – наказаний, запретов и ограничений, приемов “проявления власти”.

Теоретико-методологические основы исследования. В качестве методологической основы для исследования были использованы принципы развития и системности, индивидуальный подход. Мы основывались на культурно-исторической теории Л.С. Выготского, эпигенетическом принципе развития Э. Эриксона, теории деятельности А.Н. Леонтьева и Д.Б. Эльконина, а также функциональной периодизации онтогенеза и теории кризисов С. Худояна. Свои исследования мы построили на концепциях кризиса трех лет Л.С. Выготского, Л.И. Божовича, А. Валона, К.Н. Поливановой и С. Худояна.

Практическое значение исследования. Результаты исследования могут быть использованы в сферах психологической консультации связанной с воспитанием детей, детской психотерапии, в дошкольных учреждениях в процессе организации воспитания детей, при составлении курсов по возрастной психологии.

Объем и структура работы. Диссертационная работа объемом 117 компьютерных страниц состоит из введения, трех глав, заключения, методический советов и рекомендаций, списка использованной литературы и приложений. По теме диссертации опубликованы 4 статей.

ANNA HAMBARDZUM ALAVERDYAN

PERSONALITY DEVELOPMENT CRISIS OF THREE YEARS AND FACTORS DETERMINING ITS COURSE

Abstract of the dissertation for the degree of candidate of psychological sciences in the area of specialization 19.00.01 – "General psychology, theory and history of psychology, personality psychology"

The dissertation defense will be held on December 09, 2014 at 12:00 at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan during the session of working HCC Philosophy and psychology 064 specialized council.
Address: 0010, 17 Tigran Mets str., Yerevan.

SUMMARY

The actuality of the research: The crises of development play a crucial role in a person's destiny; they often determine the direction of an individual's development and his way of life. They are currently undergoing a qualitative change, thus creating favourable conditions for negative developments. Scientists who have studied the problem of crises, such as Bühler, Busemann, Jung, Kretschmer, Erikson, Remshmidt, Adler, Shahverdyan and Khudoyan, believe that their negative outcomes can bring about not only undesirable personality changes within norm, but also personality pathologies, pathological changes in character, such as psychopathies, neuroses, psychoses, social deviancies. At the same time, it is almost unknown what factors lead to negative outcomes of crises and how their negative developments can be avoided. Suffice it to say that we have found only one study that describes how education influences the course of crises. It should be noted that the theoretical aspect of the problem of crises is described in some detail (Vygotsky, Bühler, Erikson, Elkonin, Leontiev, Bozhovich, Polivanova, Khudoyan and others), but on the empirical level it shows a considerable lack of research. There is a huge gap between theory and practice. Very little or no research is devoted to the diagnosis of crises and their course, the link between personal characteristics and the course of crises, the problem of educational approaches mitigating crises, etc.

The aim of the research: The aim of the present research is to study the effect of different parenting styles on the course of the crisis of three years.

The hypothesis of the research

1. If parents have a correct perception on the features of preschool age and symptoms of the third-year crisis and take them into consideration while bringing up their children, i.e. support and encourage their desire to establish themselves as full human beings, help them see what characteristics "an adult" (a full human being) should have, treat them as "equals", i.e. full human beings, boost their self-esteem, the third-year crisis follows a mild course, showing no symptoms of acute crisis or conflicts with parents. If parents hamper the aspirations and the process of their children's self-affirmation ("don't do this or that", "calm down", etc.), do not encourage them at trying to seem "adults", do not explain to them how adults should behave, do not perceive them as full human beings and do not respect them, the crisis escalates.

2. The crisis is compounded by an authoritarian parenting style and has a milder course if the parenting style is based on authority.

3. Indirect methods contribute to a mild course of the crisis while direct methods of education cause its acute course.

The object of the research is the course of the crisis of three years.

The subject of the research is the impact of education on the crisis of three years.

The sample of the research: The subjects of this study were selected from pre-school children and their parents. 138 children aged 2.5-4 years and 138 parents were involved in our study. The research was conducted in Yerevan kindergartens N99 and N100.

The scientific novelty of the research: The present research examines the effect of different parenting styles on the course of the crisis of three years. If parents support and encourage their children's desire to establish themselves as full human beings, help them see what characteristics "an adult" (a full human being) should have, treat them as "equals", i.e. full human beings, boost their self-esteem, the third-year crisis follows a mild course, showing no symptoms of acute crisis or conflicts with parents and vice versa. It is proved that the crisis is exacerbated by the authoritarian parenting style and has a milder course if the parenting style is based on authority. It is proved empirically that indirect methods of education, such as setting an example, inspiring, encouraging and being indifferent, contribute to the mild course of the crisis, and vice versa - the crisis is accentuated by the use of direct methods of education - punishment, prohibitions and restrictions, "expressions of power".

Theoretical-methodological background of the research: Development and systemicity principles, as well as individual approach comprise the methodological framework of the study. Vygotsky's cultural-historical theory, Erikson's epigenetic principle, Leontiev and Elkonin's activity theory, Khudoyan's functional ontogeny periodization and theory of crises served as a basis for the study. The present research is built on the concepts of the crisis of three years developed by Vygotsky, Bozhovich, Wallon, Polivanova and Khudoyan.

The practical significance of the research: The study can be used in the fields of psychological counseling related to the education of children, child psychotherapy, for organizing child-rearing in preschools, for preparing courses on developmental psychology.

The volume and structure of the work: The present dissertation consists of an introduction, three chapters, conclusion, methodological advice and recommendations, bibliography (107 titles) and an appendix. 19 histograms are included in the work. The total volume is 117 pages.